ՍՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԱՆ. Բառակազմական բազմակի պատճառաբանվածությունը ժամանակակից հայերենում (Երկրորդ լրամշակված հրատարակություն), *Երևան, Հեղինակային հրատ., 2013, 274 էջ:*

Բոլորովին վերջերս լույս է տեսել Սուսաննա Տիոյանի «Բառակազմական բազմակի պատճառաբանվածությունը ժամանակակից հայերենում» աշխատությունը, որը կարևոր ներդրում է հայերենի զարգացման բնագավառում: Այն տպագրվել է ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պատասխանատու խմբագիրն է բ. գ. դ., պրոֆեսոր Վ. Գ. Համբարձումյանը, գրախոսները՝ բ. գ. դ. ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ե. Սարգսյանը և բ. գ. թ. Ս. Գալստյանը:

Մենագրությունը նվիրված է ժամանակակից հայերենի բառակազմության այն խնդիրներին, որոնք վերաբերում են դեռևս ամբողջական քննության չառնված բառակազմական բազմապատճառաբանվածությանը:

Ս. Տիոյանն ուսումնասիրել և ներկայացրել է արմատական ածականների, արմատական բայերի, նախածանցավերջածանցավոր կազմության բառերը, հիմնավորել, որ բերված արմատական ածականներն ու արմատական բայերը օժտված են բազմապատճառաբանվածությամբ, որը կարող է նպաստել բացահայտելու նոր իմաստներ՝ մինչ այժմ անհայտ և լեզվի զարգացման հետագա փուլերում իրագործելի: Բազմապատճառաբանվածության շնորհիվ մեր բառապաշարը կարող է համալրվել այնպիսի բառերով, որոնք կառաջանան հետագա փուլերում:

Գիրքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, հավելվածից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և պայմանական նշաններից: Ներածության մեջ հեղինակը ներկայացնում է բառակազմական պատճառաբանվածության ուսումնասիրությունը լեզվաբանության մեջ ընդհանրապես և ժամանակակից հայերենում՝ մասնավորապես: Առաջին գլխում տրվում է արմատական ածականների բառակազմական ներուժը, երկրորդում՝ արմատական բայերի բառակազմական ներուժը և դրանց բառակազմական բները, երրորդում՝ բառակազմական պատճառաբանվածության տեսակները նախածանցավոր-վերջածանցավոր կազմություններում, այնուհետև եզրակացություններ: Հիմնահարցի ուսումնասիրման դրդապատճառը եղել է այն, որ ժամանակակից հայերենում բառակազմական պատճառաբանվածությունը և դրա մի

մասնավոր՝ համածանցման, այսինքն՝ միաժամանակ և՛ նախածանցի, և՛ վերջածանցի կցման երևույթը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ: Սույն աշխատանքի լույս աշխարհ գալուն մեծապես նպաստել են անվանի լեզվաբան Գ. Բ. Ջահուկյանի կազմած արմատական ածականների և արմատական բայերի ցանկերը՝ որպես բառակազմական գործընթացի անառարկելի ելակետ:

Աշխատության շնորհիվ է, որ՝

1. արմատական ածականների և արմատական բայերի բառակազմական գործընթացներում հատկապես բազմապատճառաբանվածության դեպքերի առկայությամբ հայտնաբերվել են չիրացված բառակազմական տակտեր՝ կիրառելով լեզվաբանական նորագույն մեթոդներ: Օրինակ՝ անցնել → անցողաբար → անցողական → անցողիկ, իմանալ → իմացաբանական → իմացաբանորեն → իմացաբանություն, երգել → երգ → երգահան → երգահանություն *և այլն:*

2. Ճշգրտվել են բառակազմական բներում պատճառաբանվածության տեսակները՝ իմաստային / ձևական, անմիջական / միջնորդավորված տարատեսակներով: Օրինակ՝ ննջել → ննջեցնել → ննջեցյալ *(վերջինիս ածանցյալն այս բառակազմական շղթայում մեկնաբանվում է միայն ձևականորեն, բայց ոչ իմաստային պատճառաբանվածությամբ, այսինքն՝* ննջեցնել-ով *իմաստով):* Դավանել → դավադիր → դավադրում → դավադրություն*, բայց* դավանանք *գոյականի դեպքում՝* դավակից → դավակցություն *(այս բառաբնի առաջին շղթայում առկա է* դավադրել *բայի իմաստը, իսկ երկրորդ շղթայում՝* դավանել *բայինը):*

3. Բացահայտվել են հնացած հազվադեպ գավառական հին և այլ նշումներով այնպիսի միավորներ, որոնք ժամանակակից հայերենի արդի փուլում սկսել են կիրառվել կամ կիրառելի են դրանց ածանցյալները: Օրինակ՝ շինել → շինածո *(հզվդ.),* ժողովել → ժողով → ժողովական *(հնց.),* վարանել → վարան*(հզվդ.),* անվարան → անվարանորեն *և այլն:*

4. Ներկա քննությամբ վեր են հանվել բառերի կամ արմատների այնպիսի նմուշներ, որոնք Արդի հայերենի բացատրական բառարանում (այսուհետև՝ ԱՀԲԲ) չկան: Սույն ուսումնասիրությամբ արձանագրվել են նաև բառաբներում բառերի իմաստափոխության հետաքրքրություն ներկայացնող մի շարք երևույթներ: Օրինակ՝ կայ(կաց)→ կացարան→ կացություն→ կացիկ→ կացական, պաշարել→ պաշարում→ պաշարմունք իմաստափոխություն, այդ նմուշներից են՝ ապսպրել, կորզում, անլսելի, անմնացորդ, համաներում, նպաստավորում, հրամայական, գերապայծառ, կառուցող, վերակառուցող, նորոգ, վերանորոգող, վերանորոգելի *և այլն:*

5. Պարզվել է, որ բառակազմական շղթայում չիրացված և ԱՀԲԲ-ում չարձանագրված բառերի մեծ մասը դերբայական ձևեր են (հիմնականում հարակատար, ենթակայական, որոնք, համաձայն բառարանագրության սկզբունքի, որպես գլխաբառ չեն տրվում, բայց

այլ բառերի բացատրություններում առկա են. օրինակ՝ հաշտ → հաշտվողաբար → հաշտվողորեն*):*

6. Անհստակություն է նկատվել արմատական ածականների մեծ մասում, հատկապես այն դեպքում, երբ բառակազմական շղթայում կա պատճառական բայ ու դրանից -ում-ով սերված բայանուն: Օրինակ՝ բարակ → բարականալ → բարակացնել → բարակացում *և* բարակ → բարակել → բարակեցնել → բարակեցում *(այս բառը արձանագրված չէ ԱՀԲԲ-ում) կամ* դանդաղ → դանդաղանալ → դանդաղացնել → դանդաղացում *(սա նույնպես արձանագրված չէ ԱՀԲԲ-ում),* դանդաղ → դանդաղել → դանդաղեցնել → դանդաղեցում*, բայց* երեր → երերալ → երերում → երեր → երերել*. տե՛ս* երերալ → երերեցնել*, նաև* երերացնել → երերացում *(այս բառն էլ չկա ԱՀԲԲ-ում) և* խիտ → խտանալ → խտացնել → խտացում*:*

ԱՀԲԲ-ում մի դեպքում եցում*-ով ձևը չի արձանագրվում, մյուս դեպքում՝* ացում*-ովը, երրորդ դեպքում բայանունը միջնորդաբար սերվում է* երերալ *անորոշ դերբայից, այլ ոչ դրա պատճառականի ձևից, չորրորդ դեպքում միօրինակություն է, այսինքն՝* բարակ *ածականի* բարակացում *բայանունն է ճիշտ,* դանդաղ*-ի* դանդաղեցում*-ը, իսկ* երեր*-ի՝* երերում*-ը: Այսպիսիք արմատական ածական ելաբառերում համատարած են և միօրինականացման, նորմավորման պահանջ է առաջանում:*

7. Ան*- նախածանցով բառերի խմբում՝ երկու օրինակներում, նկատվել է պատճառաբանվածության ձևային, իմաստային ու ձևաիմաստային տարատեսակների դրսևորում, այսպես՝*



(կետագծերով սլաքները տակտային պատճառաբանվածության ձևային *տարբերակի ցուցանիշներն են):*

8. Նկատվել է, որ արմատական ածականների բառակազմական գործընթացում երևում են «բաց», «դատարկ» տակտեր, որոնք լեզվի զարգացման ընթացքում համալրվելու են նորանոր բառերով, ինչպես՝ անճշգրիտ, առարկելի, գերապայծառ, վերահսկող, համաներում, նորոգող *և այլ բառերը:*

9. Պարզվել է, որ նախածանցավոր-վերջածանցավոր երկպատճառաբանված բառերի նախածանցման դեպքում հիմնականում սերվում են գոյականներ, ավելի քիչ՝ ածականներ և հազվադեպ՝ մակբայներ՝ -ում, -ություն, -իչ, -ող, -ական, -աբար, -ովին *վերջածանցներով: Նախածանցման դեպքում խոսքիմասային պատկանելության փոփոխություն չի կատարվում, իսկ ածանցյալների իմաստները փոխվում են՝ կապված ելաբառերի իմաստների վրա նախածանցների իմաստների ազդեցության չափից: – Ում է պահանջվում, օրինակ՝* բեռնել → բեռնում *(գ.)* → փոխբեռնում *(գ.),* հաղորդել → հաղորդում *(գ.)* → փոխհաղորդում *(գ.),* գնահատել → գնահատում *(գ.)* → գերագնահատում *(գ.) և այլն:*

10. Նախածանցավոր-վերջածանցավոր բարդությունների սերման վերջածանցման դեպքում ամեն մի ածանցյալ շարահյուսական պաշտոնի և իմաստային տեսանկյունից որոշակի մոտեցում է պահանջում: Օրինակ՝ արտատպել → արտատպող, գերակատարել → գերակատարող *զույգ բառերում գործողության և այդ գործողության կատարողի իմաստին համապատասխան՝ տեղի է ունենում խոսքի մասերի անցում բայից գոյականի (այլն ածականի կամ դերբայի), սակայն* նորաբնակ → նորաբնակություն, վերաբնակ → վերաբնակություն, տարաբնակ → տարաբնակություն *զույգերում խոսքի մասերի փոփոխություն տեղի չի ունենում, բայց կատարվում է իմաստափոխություն:*

11. Թվով 461 նախածանցավոր-վերջածանցավոր երկպատճառաբանված ածանցյալների ցանկի վերհանումն ու ձևաիմաստային համապատասխանությունների ուսումնասիրությունը պարզել է, որ նշյալ երևույթը և համածանցման երևույթը բնորոշ են ժամանակակից հայերենի բառակազմությանը: Օրինակ՝ առճակատում, անդրշիրիմյան *և այլն (տե՛ս կետ 12-ի օրինակները):*

12. Աշխատության 246–247 էջերում հեղինակը բերում է 27 համածանցման օրինակ, որոնց ելաբառերից միայն մեկն է դերանուն՝ (ես) *անդր-*ես*-ություն, մյուսները գոյականներ են, այսպես՝ անդր-*ծով*-յան, անդր-*ջրհեղեղ*-յան, անդր-*երկր*-այինն, անդր-*ամպ*-յան և այլն: Սերման արդյունքում ստացվում են ածականներ՝* առափնյա, անդրծովյան, ապօրինի *և այլն, որոնցում կատարվում է խոսքիմասային անցում, և գոյականներ՝* անդրատենչություն, առճակատում և անդրեսություն, *որտեղ խոսքիմասային անցում չկա:*

Այսպես հեղինակը շարունակում է իր նորամուծությունները՝ կատարելով համապատասխան եզրակացություններ: Ընդ որում, մենագրության մեջ ընդգրկված են նաև արմատական բայերի ու արմատական ածականների բառակազմական բառարանները, այսինքն՝ բառակազմական ողջ ներուժը. այդ իմաստով այն կարող է նաև բառարանի դեր կատարել:

ՕՖԵԼՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ